

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՀԱՆՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ս.Ա. Խանյան

Հայ դասական գրականության անմաս ներկայացուցիչներից մեկը՝ Ղազարոս Աղայանը, հայտնի է ոչ միայն որպես բանաստեղծ ու արձակագիր, մանկավարժ ու մանկագիր, լեզվաբան ու հրապարակախոս, այլև գրական-քննադատ: Հայրենի մշակույթին նվիրած իր այս ստեղծագործական բազմազան ու բազմաբնույթ ներդրումներն են նկատի ունեցել Մեծ Լռուցին՝ գրելով. «Նա նման չէ մեր գրողներից ոչ մեկին: Նա ամեն ճյուղի մեջ ցույց է տվել ինքնուրույն ճաշակ և երեք չի եղել երկրորդը»: Այս ճշմարիտ ու սրտաբոլս գնահատականը ոչ միայն հարգանքի ու սիրո տուրքի արտահայտություն է, այլև Ղ. Աղայանի գրական ներդրումների ընդգծումը 19-րդ դարի երկրորդ կեսի հայ բանասիրության բնագավառում:

Ղ. Աղայանի հաջողությունների գրավականը նաև և առաջ, մայր ժողովրդի ճակատագրի հետ ունեցած նրա անխօնի կապի, ժամանակի շունչը լինելու, ամբողջ կյանքում ազգային գրականության առաջնահագին նպաստելու մեջ է: Նրա արդյունավետ ծառայությունը հայոց դպրոցների, մանկավարժության, մամուլի, մշակույթի զարգացման ու հարստացման ուղղությամբ իրավունք է վերապահում մեզ նրան գնահատելու որպես հանրագիտարանային գիտնիքների տեր գրող-մտածող, մեծ գեղագիտ:

Աղայանը առաջին հայ գրողներից էր, որ գրական բնադրատությունը համարեց գրականագիտության կարևոր բաժիններից մեկը, որը մեծ դեր ունի ժամանակակից գեղարվեստական գրականության զարգացման ասպարեզում: Գրականության և հասարակական կյանքի սերտ կապը նա համարել է գեղարվեստական խոսքի զարգացման հիմնական աղբյուրը:

Ղ. Աղայանը չի ընդունել մակերեսային ու անտարբեր վերաբերմունքը նոր իրատարակված գրքերի հանդեպ: «Խորհրդածություն «Մուրճ» ամսագրի ընթերցումից հետո» ծավալուն հորվածում Ղ. Աղայանը նաև անդրադառնալով «Հյուսիսափայլ» ամսագրի դերին ու տեղին մեր մշակույթի պատմության մեջ, ուշադրությունը սևեռում է «Մուրճի» էջերին և քննարկում գրականության և գրական բնադրատության հիմնավանդիրները: «Գրականության միակ ջանքը պետք է լինի... իր ընթերցողներին ինքնածանոթության ճանապարհի վրա կանգնեցնել, որ նրանք իմանան իրանց շրջապատող երևույթների բացատրելը՝ որոշել չարը բարուց, լույսը՝ խավարից, լավը՝ վատից, կենդանին՝ մնուածից, օգտակարը՝ վնասակարից, բարեկամը՝ թշնամուց, կյանքը՝ մահից և այլն»<sup>1</sup>:

Աղայանն ուսուցանում է՝ բարձրարվեստ գրականություն ունենալու համար անհրաժեշտ է ունենալ առողջ գրաքննադատություն: Կոնկրետանալով «Մուրճի» «Գրախոսություն» բաժնի վրա, Ղ. Աղայանը գրում է «Գրականությունն առանց կրիտիկայի միևնույն է, թե ուսումնարանն առանց վերատեսչի: Կրիտիկայի չլինելը տկարության և հիվանդության նշան է, այդ հիվանդությունը կարող է բուժել միայն իր գործիքն հմուտ, անկախ և ինքնուրույն բնադրատող կրիտիկությը»<sup>2</sup>:

Ղ. Աղայանը ուսալիստական բնադրատության ջատագովներից է: Այս առումով նա հետևել է ռուս մեծ բնադրատ Բելինսկու և հայ ականավոր գրող-քննադատ Մ. Նալբանդյանի խորհրդներին: Քննադրատը պետք է լինի զարգացած, ազնիվ, անկողմնակալ: Նրան պետք է հոգեն միայն ազգային գրականության շահերը: Պետք է Աղայանը «Համլետ» ողբերգության աղբյուրն ու բնադրատությունը» գրի ամերով գրած հորվածում Աղայանը գտնում է, որ բանաստեղծին զնահատողը պետք է բանաստեղծ լինի, ասել է թե՝ քննադրատը պարտավոր է իմանալ և թափանցել պրետական արվեստի խորքները, որպեսզի կարողանա իր դիտողություններով ու խորհրդներով համոզնի հեղինակին, օգնի նրան:

1898թ. մայիսի 1-ին գրած նամակում, որ ուղարկել էր Թիֆլիսից Բաքու՝ Աստվածատուր Կամկաճյանին, որը Բաքվի ինժեներներից էր, առաջանիմ հասարակական գործիչ, Բաքվի մարդասիրական ընկերության անդամ, Աղայանի անձնական բարեկամներից, Ղ. Աղայանը շնորհակալություն է հայտնում ընկերությանը, որ թոշակ է նշանակել Ղ. Աղայանին, Ալ.

Շիրվանգաղենին և Երիտասարդ Հռիփ. Թումանյանին, որովհետև վերջինս բազմագավակ է, կարիք ունի նյութական օգնության: Բարեկամաբար ընդգծելով այս Երևոյթը, Ղ. Աղայանը անդրադարձում է Մեծ Լռուցու պրետական արվեստին, որ խոսուն օրինակ է Ղ. Աղայանի գրական հայացքների հարստության և թարմության: Ծոշափելով արվեստագնուներին օգնելու անհրաժեշտությունը, անվանի գրողն ընդգծում է ստեղծագործողների բնատուր տաղանդի կարևորությունը: Նա անդրադարձում է Երիտասարդ ստեղծագործողներին և գրում. «Մեր նորահաս բանաստեղծների մեջ Հռիփաննեն Թումանյանցը բարձր է ամենքից էլ և ունի փայլուն ապագա, թեև որքան էլ այդ ապագան փառավոր լինի, նա չի կարող ապահովել իր և իր բազմանդամ գերդաստանի նյութական վիճակը: Նա ունի բարձրաթոշի Երևակայություն և սահուն լեզու, խորաթափանց զննողություն և այն բոլոր հոգեբանական առանձնահատկությունները, որոնք են մի ապագա ինքնուրույն բանաստեղծի տաղանդը ու հանճարը բնորոշելու համար»<sup>3</sup>

Ղ. Աղայանը իր գրական հայացքների շրջանակներում քննության է առել նաև ռոմանականի և ռեալիզմի հարցերը: Նոր Նախիջևանից Թումանյանին գրած նամակներից մենում (1898թ. մայիսի վերջին) հայտնում է, որ ինքը թարգմանում է ամերիկյան գրող Բելլամիի (1850-1898) «Ապագա դարը» վեպը: Հռիփ. Թումանյանը պատասխան նամակում հանդիմանել է Աղայանին, որ ժամանակ է կորցնում և թարգմանում մի գրողի, որը ներկան չի նկարագրում, այլ ապագան, բայց նա ապագայից քննադատում է ներկան: Եվ ինչ որ ասում է, բոլորն էլ էն ա Ավետարանի կողքին գրած... Բելլամիին նման չէ սովորական ուսուռփական ռոմաններին: Ճշմարիտ է, կան, դրան հակառակ, խոտղներ, ինչպես կան և լուսնահաչ տվյալ շներ, բայց Ամերիկայում արդեն տեղ-տեղ ձեռք են զարկել իրականացնելու նրա նախագիծը, որ միակ մարդավարականն է, իսկ մեզ համար դեռ միայն իդեալ կարող է լինել: Լավ են իրական կյանքից առած վեպները, դեռի ապագա ձգտող հոգիներին միայն ինդալականը կարող է բավականություն տալ, մանավանդ երբ երկուսի՝ իրականի ու իդեալականի՝ ներկայի և ապագայի պատկերները դրված են լինում իրար մոտ: Այսպես է վարվել Բելլամին, որ վախճանվեց այս տարի: Եթե չնս հավատում ասածիս, առաջ կարդա ու հետո դատապարտիր, թե՛ ժամանակդ ինչու են զուր կորցնում»<sup>4</sup>

Ղ. Աղայանը լուրջ ուշադրություն էր դարձնում գրական ստեղծագործության կենսական թրթիրներին, ժողովրդական բանավոր ստեղծագործության հետ ունեցած արդյունավետ կապին: Այս առումով հետաքրքիր է Վ. Թումանյանին 1899թ. Նոր-Նախիջևանից հղած նամակում արտահայտած կարծիքը. «Ստացա Ալեքսանդր Շատուրյանից իր բանաստեղծության երկրորդ հատորը: Այս հատորը առաջինից անհամենմատ լավ է: Բայց, հոգիս, իմ ուզածս չէ: Այս անգամ լեզուն էլ է գեղեցիկ, բանահյուսության օրենքները ևս խիստ կերպով պահպանված են, ոչ մի բռնագրուսություն, ոչ մի անհարթություն չկա: Բայց ստեղծագործություն չկա»<sup>5</sup>:

Աղայանը, որ խորապես զիտեն ուս և համաշխարհային գրականության մեծերին, համոզվել էր, որ իսկական ազգային գրականությունը ստեղծվում է հայրենի հողի վրա, մայր ժողովրդի գրկում: Նա պնդում է, որ ազգային հոգեբանությամբ գրականություն հնարավոր է արարել միայն սեփական երկրում, ժողովրդի հետ ունեցած ամենօրյա շփումների խաչմերուկում: Նա նման գրականությունը համարում էր բնաշխարհիկ: Բարձր զնահատելով Մ. Թաղիայանի, Ղ. Ալիշանի, Ս. Շահազդի պողիան, միաժամանակ ընդգծում է, որ նրանց երկնրի հայրենասիրական ուղղությունը զուրկ է ժողովրդական, բուն աշխարհիկ տարրից: Ինչո՞ւ հասարակությունը ջերմորեն ընդունեց Խ. Աքրվյանի «Վերը Հայաստանի» վեպը: Այս հարցին Աղայանը պատասխանում է մարգարեաբար: Աքրվյանի հաջողությունը նա համարում է Քանաքեռի ծնունդ լինելը և ոչ միայն այդ: Աքրվյանը մեծացել է ժողովրդի գրկում, տառապել նրանց զավով, սնվել նրանց երազանքով, նրանց բառութանով: Նա ինչ ստացել է ժողովրդից, տասնապատիկ հարստացրած վնրադարձել է նրան: Անդրադառնալով Միջթարյան միաբանության այրերին՝ Սղայանը բարձր զնահատելով նրանց մշակութային գործունեությունը, այնուամենայինիվ, նշում է, որ նրանց ստեղծած զեղարվնստական երկնրի հետու են ժողովրդական տարրերից, որովհետև ստեղծվել են օտար հողի վրա, օտար պայմաններում: Խավական ազգային գրականության սնուցող աղբյուրը լստ Աղայանի, ժողովրդի կենդանի կյանքն է, նրա առօրյա հոգսերն ու տվյալանքները, հոյսերն ու ակնկալիքները:

Ազգային ճշմարիտ գրականության ստեղծման մասին այդ դիտարկումը կռնկրեւ ու համոզիչ արտահայտված է նաև Աղայանի «Հռիփ. Թումանյանի «Անուշ»-ից մի ճաշակ» գրախոսության մեջ: Վերլուծելով ու և զնահատելով Թումանյանի «Բանաստեղծություններ»

երկրորդ ժողովածուն, առանձնապես մատնացոյց անելով «Անուշ» պրեմը, նա գրել է. «Ծննդաբանը մարդուս երկրորդ ծնողն է: Ծնողները տալիս են իրանց հոգու և մարմնի հատկությունները, ծննդաբանն էլ սնուցանում է նրան իր հոգովն ու մարմնովը: Երանի նրան, ով որ Ադամի նման դրախտումն է ծնվում: Եթե կա մեր երկրումը մի դրախտ, այդ Գուգարաց աշխարհն է Մեր քանատեղծը՝ Հովհաննես Թումանյանը, մեզ «Անուշ» քանատեղծությունը տալու համար ծնվել ու սնվել է այդ անուշ երկրում»<sup>6</sup>:

Ղ. Աղայանի գրախոսությունները, քանավիճային պատասխանները, ընդհանրացումները գեղարվեստական գրականության հասարակական նշանակության, ազգային ճակատագրի հետ ունեցած փոխարաբերության վերաբերյալ չեն կորցրել իրենց նշանակությունը և ունեն արդիական հնչողություն:

Այսպես, գրախոսնելով Գարբին նպիսկոպս Այվազյանի «Հազար և մի առակավիր քանը ազգային և օտարք» ժողովածուն, Աղայանը խորհուրդ է տալիս ազգային առածները, երգերը, առակները, հերթաթներն ու նախապաշարմունքները հավաքն ոչ թե գրաբարով, այլ ժողովրդի խոսակցական լեզվով»: Այդ նշանակում է, որ գրաբարն արդին կաղապարվել էր, ժողովուրդը խոսում էր աշխարհաբար, և կարող էր պահպանն լեզվական երանգները: «Լեզուն,- գրում է նա, - կենդանի լեզուն չի կարելի մի այնպիսի շրջանակի մեջ դնել, որ նա սահմանափակ և անփոփոխ մնա դարուց ի դարս, այլ պետք է աճի ու զարգանա, որպես կենսունակ, գործարանավոր մարմին»<sup>7</sup>: Մեծ գրողը, սակայն, զգուշացնում է, որ չի կարելի շահարկել այս պահանջը և տպագրել գեղարվեստի հետ կապ չունեցող երկեր, ինչպես վարվել է Գ. Այվազյանը՝ ստոդնելով քառատողեր, աղավաղելով սեղմ, մի տողով արտահայտված առածը, որը ներկայացնում է ժողովրդի իմաստությունը:

Գրախոսնելով երիտասարդ Հովհաննես Հովհաննիսյանի «Քանատեղծություններ» ժողովածուն (1887 թիվ), Ղ. Աղայանը, ողջունելով հեղինակին, միաժամանակ խորհուրդ է տալիս խոյս տալ խրթնած լույսից, ընդգծելով. «Քանատեղծական գրվածքին խրթնած լույթյամբ վսեմություն տալն արհեստական է. ասացվածքն ինքը պետք է վսեմ լինի յուր ամենամերկ պարզության մեջ, ինչպես Հերկուլեսի մերկ անդրիանդը: Ճշմարիտ քանատեղծությունը շպարանքի թշնամի է, նա սիրում է պարզը, բնականը»<sup>8</sup>:

Բանաստեղծը մեծ առաքելություն ունի, հաստատում է Աղայանը: «Քանատեղծը յուր լեզվով, յուր ոճով, երևակայությամբ մի ամբողջ ժողովուրդ է: Բանաստեղծի ցավը, վիշտը ժողովրդին է, ինչպես և ժողովրդին՝ նրանը: Նա ունի նոյն հավատը, որ ունի ժողովուրդը անցյալի վերաբերությամբ, նոյն սերը, որ ունի ներկայում և նոյն հոյսը, որ ունի ապագայի վերաբերությամբ: Բանաստեղծը ժողովրդի լեզուն է, նրա սրտի հայտարարն ու թարգմանը: Վերջապես բանաստեղծը ժողովրդի ծնունդն է և ոչ ժողովուրդը բանաստեղծի»<sup>9</sup>:

Բերելով ճշմարտացի այս խորհուրդները, Ղ. Աղայանը նշում է, որ այս տեսակետից Հ. Հովհաննիսյանի գրքները ճշմարիտ քանատեղծության դրոշ են կրում իրենց վրա: Ականափր դասականը միաժամանակ ընդգծում է, որ ճշմարիտ քանատեղծությունն արարվում է ազգային հողի վրա: Եվ նա հավատում է, որ Հ. Հովհաննիսյանն իր բնական տաղանդով կարող է ձեռք բերել այն, որին նախորդները հասնել չկարողան: Դժվար չէ նկատել, որ Ղ. Աղայանը առաջ է քաշում ավանդությի և նորարարության փոխարաբերության հարցը՝ գեղարվեստական գրականությունը համարելով որպես անընդհատ զարգացման պրոցես:

Ղ. Աղայանը չի ընդունել անհմաստ, կոլմնակալ քանավեճը: Նա խորհուրդ էր տալիս ցավել ազգային գրականության զարգացման համար, լավին լավ ասել, վատին՝ վատ: Անդրադառնալով Հ. Հովհաննիսյանի մասին գրած իր հոդվածին, որին նախանձով էր վերաբերվել Գարեգին Ենգիբարյանը, Ղ. Աղայանը շեշտել է. «Ես ասել եմ, որ քանատեղծը յուր ժողովուրդի և ժամանակի ծնունդն է: Իմ ասածը մի քացարձակ և հավիտնական ճշմարտություն է: Սրա մեջ են ամփոփված թե՛՛Հոմերոս, թե՛՛Ընթափիր, թե՛՛Լուտեր»<sup>10</sup>:

Դեռ ավելին, Աղայանն ապացուցում է, որ իր ընդդիմախոսը չի հականում իդեալի դերը և ձգուում է հասկացնել նրան, որ «աշխահիս երեսին առանց իդեալի ժողովուրդը չկա, և ազգ ազգից, հասարակություն հասարակությունից և դասակարգ դասակարգից տարբերվում է յուր իդեալով»<sup>11</sup>:

Ղ. Աղայանի վերաբերմունքը Հովհաննիսյանի պրեգիային մեծ մտածողի, ազգային գրականության շահերով ապրող ստեղծագործողի ազնվության արտահայտություն է: Նա չի հանդուրժել նրանց, ովքեր պատկանել են Դրամբյանների ապաշնորհ ջոկատին, այն Դրամբյանների, ովքեր խրտիլակ էին դարձել Հովի. Թումանյանի ճանապարհին 19-րդ դարի

վերջին: Այս տիած նրևույթը, պարզվում է, որ արմատներ է ունեցել, որի դեմ մարտնչել է բյուրենյա հոգու տեր Աղայանը:

Այսպես, 1888թ. Թիֆլիսից Մոսկվա հ. Հռվիաննիսյանին հղած իր նամակում Ղ. Աղայանը կրկին անգամ է անդրադառնում հայոց գրական կյանքում իշխող մթնոլորտին, որ դառնացրել է անվանի դասականին: Նամակում արծարձված լինդիրներն այսօրվա համար ևս կարևոր են և միշտ էլ արժեքափրեվելու են ստեղծագործողների համար:

Նամակից նրևում է, որ հ. Հռվիաննիսյանը բանաստեղծությունների իր նոր ժողովածուն որպես նվեր ուղարկել է ավագ գրչընկերոջ՝ Ղ. Աղայանին: Այստեղ Աղայանը նորից անդրադառնում է գրականության և գրականագիտության հիմնախնդիրներին՝ ներկայացնելով իր ուսանելի մտորումները: Աղայանը դեմ է այն նրևույթին, եթե գրաբնինիներն ամեն կերպ արգելում են այնպիսի գործերի տպագրությունը կամ դրանց մասին խոսելը, ինչպիսին է հ. Հռվիաննիսյանի «Աշուղը» հանրահայտ բանաստեղծությունը: Խոսելով պարոն Ենգիբարյանի բացասական վերաբերմունքի մասին՝ Աղայանն ընդգծում է. «Ինչպես բարձրից է խոսում, տեր Աստված, ենթադրում է, որ ուրիշները խոտ արածողներ են, մոռանում է, որ ինչ որ ինքը նոր է ճաշակում, ուրիշներն այնքան են կերել, որ զգին են»<sup>12</sup>:

Ղ. Աղայանը չի հանդուրժում թայֆայաբազությունը արվեստի աշխարհում, չի ընդունում գոնիիկ բանավեճը, վիրավորանքն ու արհամարհանքը: Նա գրում է. «Ես արդեն ասել եմ, որ հայի զլխումը երկու գործից չեն տեղափորվում, եթե որ գովում են մեկին, պախարակում են մյուսին: Դրանք մոռանում են, որ առանց նախորդի չկա հետառորդ ... Պետք է միշտ հարզանքով վերաբերվել դեպի նախորդները և հետնորդի արժանիքի տարրը փնտրել նրա նախորդի մեջ»<sup>13</sup>:

Անդրադանալով քննադատության վիճակին, Աղայանը դժգոհում է դրա վիճակից և նշում. «Մեր մեջ քննադատություն, անալիզ չկա, այլ միայն ունկամ կամ պարասավ: Ռաֆֆուն անվանում են վեհիմաստ և հանճարեղ վիպասան, որ չունի իր նախորդը. միևնույն թերթում Աղայանին շինում են «քրուտի շուն», տեսներ որբան զածը է մեր գրականությունը և լիտիազած»<sup>14</sup>:

Գեղարվեստական գրականության թարգմանությունը միշտ եղել է գրականագիտության կարևոր բաժիններից մեկը: Ղ. Աղայանը կարևորում է քաղաքակիրթ ժողովուրդների գրական կապերի հարցը և ողջունում հաջող թարգմանությունները ու խորհուրդ է տալիս այդ գործը հանձնարարել փորձառու գրողներին, ովքեր տիրապետում են և մայրենին, և թարգմանվող բնագրի լեզվին: Այդ առումով խորհրդանշական է «Ուրիշի գերեզմանի փրա առանց արտասուրի են լաց լինում» ծավալուն հոդվածը, որ զգին է «Աղբյուր» ամսագրի լսմբագրության պատվերով: Այսուհետեւ նա անդրադանում է նաև մի ուրիշ թարգմանված գրքի, որ կրում է «Քուլդար ավագակապետ» խորագիրը: Ղ. Աղայանը առաջին զրքի թարգմանությունը համարում է անհաջող, որովհետև թարգմանիչն աղավաղել է զրքի բովանդակությունը, տեղին ու ճիշտ չի օգտագործել բառերը, պատումը հայացնելու նպատակով ստեղծել է կերպարներ, որոնք կապ չունեն երկի սյուժեի և բովանդակության հետ:

Մեծ գրողի այս դիտողությունները հաճույքը են ընդունել թարգմանիչները, որովհետև նա ինքը եղել է վարպետ թարգմանիչ: Նրա գրական ժառանգության մեջ տեղ են զրավում փոխադրություններն ու թարգմանությունները ուսև և արևմտանվրապական գրականությունից: Նրա բարձրարվեստ թարգմանությունների շնորհիվ հայ ընթերցողի սեփանակությունն են դարձել Պուշկինի, Կրիլովի, Նեմիրովիչ-Դանչենկոյի, Շեքսպիրի, Շիլերի, Հայնեի, Անդերսենի և այլ տաղանդավոր բանաստեղծների գլուխգործոցները:

Համաշխարհային հոչակ ունեցող արձակագիրներից նա թարգմանել է Զոնաթան Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհությունը» վեպի առանձին գլուխներ, Բելլամիի «Ապագա դարը» վեպը և այլն:

19-րդ դարի 50-60-ական թագականներից սկսած, հայ իրականության մեջ սկսել են թարգմանել Պուշկինի «Ուկի ձկնիկ» չափած հերթաքը: Հայտնի է Օ. Պատկանյանի թարգմանությունը, սակայն առայսօր Ղ. Աղայանի թարգմանությունը առաջնակարգ տեղ է զրավում և տարիների ընթացքում այն զետեղվել է դպրոցական դասագրքներում ու քրնատումատիաներում:

Հայ զրաբնադատության պատմության մեջ նշանածող հոդվածներ են Ղ. Աղայանի «Գրիգոր Արծրունու գրական գործունեության ուղին», «Մի անհրաժեշտ ծանոթություն եպիսկոպոս Օրմանյանի նոր զրքի առիթով», «Շեքսպիրը և յուր «Համլետ» ողբերգության աղբյուրն ու քննադատությունը». «Իմ ստացած տպագրությունը պ. Ռաֆֆու «Կայենք»-ի նրկարը հատորից», «Պերճ Պողոսյանը և իր «Սոս և Վարդիթենքը», «Հայոց այժմյան բանավոր երգները» և այլն: Ղ. Աղայանը հավատում էր իր ժողովրդի արարող ուժին ու կամքին, նա մեր մշակույթի

պատմության մեջ նշանակալից ու ինքնասից տեղ է ապահովվել իր համար որպես գրող, հասարակական գործիչ, հրապարակախոս ու քննադատ:

### *Ծանոթագրություններ*

- 1.Ղ. Աղայան, Երկնրի ժողովածու, 4 հատորով, հ. 3, «Հայպետիրատ», 1963, էջ 170:
- 2.Նոյն տեղում, էջ 184-195
- 3.Ղ. Աղայան, «Երկնրի ժողովածու չորս հատորով», հ. 4, «Հայպետիրատ», 1968, էջ 553:
- 4.Նոյն տեղում, էջ 559:
- 5.Նոյն տեղում, էջ 561-562:
- 6.Ղ. Աղայան, Երկնրի ժողովածու 4 հատորով, հ. 3, «Հայպետիրատ», 1963, էջ 222:
- 7.Ղ. Աղայան, Երկնր 4 հատորով, հ. 3, էջ 117:
- 8.Նոյն տեղում, էջ 129:
9. Նոյն տեղում, էջ 130:
- 10.Նոյն տեղում, էջ 133:
11. Նոյն տեղում, էջ 133:
- 12.Ղ. Աղայան, Երկնրի ժողովածու, 4 հատորով, «Հայպետիրատ», 1969, էջ 515:
- 13.Նոյն տեղում, էջ 516:
- 14.Նոյն տեղում, էջ 516:

Литературные взгляды Газароса Агаяна.

**С.А.Ханян**

*Резюме*

В данной статье анализируются критические статьи и выступления классика армянской литературы XIX в. Газароса Агаяна в таких знаменитых журналах как “Мурч” и “Мшак”.

Автор статьи также отмечает, что после М.Налбандяна следует Агаян, который также утверждает, что без высокой критики нет высокой литературы.

В статье также подчеркивается высказывание Агаяна про переводческую литературу и отмечается, что он на нужном уровне перевел таких русских классиков, как Пушкин, Лермонтов и другие.

The literary view of G.Aghajan.

**S.A.Khanyan**

*Summary*

In this article the classic of Armenian literature of 19th century Gazaros Aghajan's critics articles and speeches in such modern effective magazines as “Murch” and “Mshak” is discussed.

It is also pointed to his convictions and struggle for realistic critics. The author of an article has noted that after M.Nalbandyan comes G.Agajan who marks that, without high and right critics there is no the good literature. It is also underlined the right mentions of G.Agajan about translating literature and is pointed that there are fine translations of Russian classics as Pushkin, Lermontov and others made by him.